

լիս արագութեամբ զանել, թէ Քը-  
րանոխական պատմութեան խնդիր-  
ների և էպօքների համար զվասու-  
րապէս ինչ գրական աշխատանքնե-  
րի պէտք է զիմնել. Գրքի արտաքին  
կաղմածքը միանգամայն նման է  
Դալմաննի զրածքին, դժբաղղարար

նաև նորանով, որ ալբրէնական ցու-  
ցակը սալիս է միայն հեղինակների  
անունները, բայց ոչ նաև խորագի-  
րը, անպէս որ շատ դժւար է զըս-  
նել այն հեղինակների անունները,  
որոնք մի քանի զրածքներ ու-  
նին.

ԱՌԵԵՐ, Վ.Ի.ՀԵԼՄ. ԿԵՍԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ: (Umriss zur  
naturlehre des Cäsarismus). Լայզերի, 1888 թ., ապ. Հիրցել,  
115 երես:

Յալտնի է, որ դարուս մէջ գեր-  
մանական նշանաւոր կրիտիկոս Գեր-  
մինասը ասատանւում էր, թէ նա  
պէտք է զրէ մի պատմութիւն գեր-  
մանական բանաստեղծութեան, թէ  
մի քաղաքականութիւն պատմական  
հիմունքի վերաբ. նա իւր ամբողջ  
կեանքում մտածում էր ան տես-  
դենցների և տեսակէտների մասին,  
որ պէտք է մարդս ունենալ վերջին  
տեսակի մի աշխատանք սկսելիս:  
Նա ալդ չ'արաւ. բայց անկարե-  
լի է որ նա, իւր ալդ դիտաւութիւններով, զրդիչ կերպով ազդած  
չը լինէր իւր աշակերտ նոշերի ու-  
սումնասիրութիւնների ուղղութեան  
վերաբ Յամենապն դէպս, ալդ երկու-  
սին էլ ընդհանուր է հեռու տեսու-  
զութիւնը պատմական կապերի հա-  
մար, ամբապնդւած զատողսւթիւնը  
օրւակ փափախող կարծիքների դի-  
մաց, ներքին հակումը՝ մասնաւոր ե-  
րեսովթները բարձր տեսակէտների  
տակ դասաւորել կեսարականու-

թեան բնութիւնը, որպէս Ռոշերը  
ներկայ գրքում գծագրում է, իսկա-  
պէս մի հատւած է օթաղաքականու-  
թիւն պատմական հիմունքի վերաբ  
գրքից, ինչպիսին Դերինուուր կա-  
րող էր մտածած լինել գրելու, թէ-  
պէտ և ալդ երկու անձերի հակեացք-  
ները ալդ առարկավի մասին իրարից  
շատ տարբեր կարող էլին լինել:

Կարդալով վերնագիրը, մարդս  
փորձւած կարող է լինել կարծելու,  
թէ իւր գրքով Ռոշերը ուզեցել է  
ազգել ներկայ քաղաքական անց-  
քերի վերաբ. բայց դա սխալ է ար-  
դէն ան պատճառով, որ գրքի ար-  
մատը ներփակւած է մի ուսումնա-  
սիրութեան մէջ, որ հեղինակը հրա-  
տարակել է, գեռ ևս 1847 թւակա-  
նին, Շմիդտի «Ամսագիր պատմաբա-  
նութեան» մէջ:

Գիրքը սկսում է մի նախածանօ-  
թութիւնով, որի մէջ հեղինակը խո-  
սում է պիտութեան ձևերի պատմա-  
կան փոփոխութիւնների մասին, իւ-

տու՝ ութ՝ զվարաւմ ուսումնասիրում է կեսարականութեան առանձնալատուկութիւնները, վետո՝ կեսարականութեան հոռվիմակեցի նախակարապետները՝ կեսարը և վետագաւ կեսարները, Հելլենացոց զինուրական բռնակալները, զինուրական բռնակալութեան փորձերը կարթագենում, կեսարականութիւնը նորագուն. Խտալիալում և վերջապէս՝ կրօմենը և Նապօլէոն, Մանրամասնութիւնների մէջ, մանաւանդ կեսարականութեան ծնւելու մասին և այն եղանակը, որպէս սա իրան պահպանում է, հեղինակը շատ նուրբ է և հիմնում է լայնածաւալ ուսումնասիրութիւնների վերաբ. Նա ոչ միան գծապրում է կեսարականութիւնը ընդհանուր գծերով, ալ մտնում է նաև շատ երեսութին մանր բաների մէջ, խօսում է կեսարների ուժի միջոցների մասին ներքինում և արտաքինում. Զարմանալի կը թւակ շատերին, բայց անհերքելի ապացուցներով հաստատում

է Որչերը, որ կեսարականութիւնը իւր հիմունքով թուզ է սպասերազմական կողմից, Հեղինակը նկարազրում է կեսարներին առանձին հիմնալի կերպով և շատ բան դորա մէջ նոր է զրականութեան համար. Տեղեր կան, սական, որոնք ճիշդ չեն կամ ոչ ուղիղ հասկացւած. բայց զոքավերաբերում են մի քանի օրինակներին, որոնցով հեղինակը լուսաբանում է իւր ասածը. դոքա չեն վեսառում գրքին.

Մեր ընթերցողների համար առելորդ չէր լինիլ ասել, թէ Որչերը, որը Եւրոպակի ներկալումո ապրող նշանաւոր և անուանի գիտնականներիցն է, քաղաքանակեսութեան պրօֆէսաօր է Լայպցիկում տասնեակ տարիներից ի վեր և թէ ալդ գիտութեան մէջ նա հիմնադիրներից մէկն է պատմական կոչւած ուղղութեան, որի մի հիւղի համար նա ալժմ միակ մնա ներկապացուցիչն է:

Ա.

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՀՈՒՎՄԵԿԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԵԱՆ (միջօլօգիացի), մասնակցութեամբ Թ. Բիրտի, Օ. Կրուգէուսի և ուրիշների, հրատարակութիւն Վ. Հ. Ռոշերի (W. H. Roscher, Ausführliches Lexikon der griechischen und römischen Mythologie). բազմաթիւ նկարներով. տետր 1—13, Լայպցիդ, 1887—1888 թ., 2272 սիւնեակ (երեսը 2 սիւնեակ), տպ. Teubner, զինը իւրաքանչիւր տետրի՝ 2 մարկ (մօտ 1 բուրլի):

Ակս ձեռնարկութիւնը իւր կարսորութիւնը և կենսականութիւնը ամեն կասկածանքից վեր ցուց տվեց

Գերմանիալում. Հրատարակութեան առաջին նպասակը երեսում է արդէն վերնագրից՝ միջոց՝ առաջ հաշտացնել